

ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝ ՈՐՄԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱԾԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՒ

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին դիտարկվող տնտեսական աճը շատ բանով պայմանավորված է տնտեսության տարբեր հատվածներում ներդրումային արդյունավետ քաղաքականության իրականացմամբ: Ինչպես հայտնի է, տնտեսական աշխուժացման համար անհրաժեշտ պայման է ներդրումների խնդիրը, որն ունի ռազմավարական կարևորություն ինչպես ազգային տնտեսության ամրապնդման, այնպես էլ միջազգային մրցունակության բարձրացման գործում:

Վարչահրամայական համակարգին բնորոշ էր պետության կողմից իրականացվող կոշտ ներդրումային քաղաքականությունը, որը որպես կանոն չէր կարողանում ապահովել անհրաժեշտ պայմաններ տնտեսության հետագա զարգացման համար: Շուկայական հարաբերությունների անցման ժամանակաշրջանի սկզբում, երբ միանգամից կրճատվում է պետության կողմից իրականացվող ներքին ներդրումների մակարդակը, իսկ մասնավոր սեկտորը դեռևս կայունացած չէ և չի կարողանում մեծաքանակ ներդրումներ կատարել արտադրության աճ ապահովելու համար, խիստ դժվարանում է տնտեսության հետագա առաջընթացը և հետևաբար կրճատվում են քնակչության եկամուտները, իջնում կենսամակարդակը:

Այս պայմաններում անցումային շրջանի պետությունները շեշտը դնում են արտասահմանյան ներդրումների վրա, որը գրավիչ լինելով հանդերձ՝ պետք է անպայման նպատակաուղղված լինի արտադրական կարողությունների ընդարձակմանը: Այսինքն ենթադրվում է, որ արտասահմանյան ներդրումները, ուղղվելով տնտեսության զարգացմանը, պետք է նաև նպաստեն ներքին ներդրումների աճին, ինչը առավել կարևոր է: Այս տեսանկյունից դիտարկենք մեր հանրապետությունում վերջին տասնամյակում իրականացվող

ներդրումային քաղաքականությունը և վեր հանենք այն գործոնները, որոնք փոխկապված են և կարող են անմիջական կապ ունենալ անցումային տնտեսության հետագա տնտեսական աճի հետ: Եթե զնահատելու լինենք անցումային ժամանակաշրջանի տաս տարիները և այն տնտեսական դժվարությունները, որ ծառացան մեր առջև, ապա ներկա պայմանների տնտեսական նվաճումները կարելի է համարել բավարար: Բերված տվյալները մասամբ բնութագրում են ներդրումների մակարդակը Հայաստանի Հանրապետությունում՝ սկսած 1990թ-ից և որոշակի պատկերացում են տալիս տնտեսական շարժի վերաբերյալ:

Ինչպես կարելի է նկատել աղյուսակից, համախառն թողարկումն իր առավելագույն արժեքն է ընդունում 1993թ-ին, որը բերեց տնտեսական անկման միտումի փոփոխմանը դեպի կայունացում, այսինքն կարելի է անել այն հետևությունը, որ 1993թ-ին տեղի ունեցած փոփոխություններն էին, որ համապատասխան դաշտ ստեղծեցին հետագա տնտեսական աճի համար: Կարելի է համարել, որ 1998-1999թթ. զգացվում է աշխուժացում, սակայն չպետք է անտեսել տնտեսական աճին խոչընդոտող արտաքին պարտքերի բարձր մակարդակը և կառուցվածքային բարեփոխումների դանդաղ ընթացքը:

Մեր արտաքին պարտքն արդեն գտնվում է մի փուլում, երբ հին պարտավորությունների սպասարկման վճարները հիմնականում իրականացվում են նոր վերցրած վարկերի հաշվին և ֆինանսական միջոցների տրամադրման հետաձգումների հետևանքով 2000թ. ընթացքում առաջացան սպասարկման վճարներն ամբողջությամբ իրականացնելու խնդիրներ, ընդ որում արտաքին պարտքի սպասարկումը 2000թ. կատարվել է 4 208.2 մլրդ դրամի չափով (որը կազմում է 51.3 %), իսկ 2001թ. հուլիսի 1-ի տվյալներով՝ 6 451.5 մլրդ դրամ (այսինքն՝ մոտ 100 և ավելի %), որն իրականացվում է տնտեսական աճի կայունացման միտումների ազդեցությամբ:

Ինչ վերաբերում է այլ աշխարհից ստացված կապիտալ տրանսֆերտներին, ապա 1996թ-ից սկսած մինչև 1998թ-ը դրանք նվազման միտում ունեն: Միաժամանակ նշենք, որ դրանցով են ապահովվում համախառն ներդրումների միայն շատ չնչին մասը: Եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ ինչպես երևում է աղյուսակից, խնայողությունները (ներդրումների

ֆինանսավորման երկրորդ աղբյուրը) հիմնականում կազմում են բացասական մեծություն, ապա ակնհայտ է, որ ներդրումներն իրականացվում են մեծ մասամբ փոխառությունների միջոցով: Ընդ որում, զուտ փոխառությունը աճում է տարեցտարի բավականին մեծ տեմպերով: Բացառություն է կազմում 1999թ-ը, ինչը պայմանավորված է խնայողությունների մակարդակի կրճատմամբ: Մեր երկրում խնայողությունների ցածր մակարդակը և կապիտալ տրանսֆերտների կրճատումը հանգեցրին այն բանին, որ մեզ մոտ կատարվող կապիտալ ներդրումների զգալի մասն իրականացվում է ոչ ռեզիդենտների խնայողությունների հաշվին:

մլն. ռուբլի Ներդրումները բնութագրող հիմնական ցուցանիշները¹ մլն. դրամ

	1990	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999
Համախառն ռոդարկում	18.1	31.7	148.7	1875.3	396.8	985.6	1225.6	1390.9	1678.9	1709.0
Համախառն նուտակում	4.8	6.4	1.0	83.3	43.9	96.2	132.3	153.3	182.8	181.2
Հիմնական կապիտալի սպառում	1.5	2.4	10.4	128.9	27.6	74.7	99.0	116.0	130.6	138.9
Հիմնական կապիտալի համախառն նուտակում	4.5	4.6	10.6	105.1	37.9	84.4	118.3	130.3	154.9	162.6
Ներքին նեոդրումներ	-	-	-	-	43.9	96.2	132.3	153.3	182.8	192.2
Օտարերկրյա ներդրումներ *	-	-	-	-	-	0.12*	0.2*	0.2*	0.4*	0.3*
Այլ աշխարհից ստացված կապիտալ տրանսֆերտներ	-	-	-	-	1.6	3.3	6.0	5.4	4.2	9.0
Զուտ վարկավորում (+) զուտ փոխառություն (-)	-1.4	-2.5	-8.5	-77.5	-19.4	-116.7	-143.4	-190.3	-200.0	-171.9
Համախառն խնայողություններ	3.4	3.9	-7.5	5.9	19.3	-6.6	-17.1	-42.4	-21.4	0.3

* հաշվարկված մլն. դոլար, ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների:

¹ Տվյալները վերցված են ազգային վիճակագրական ծառայությունից:

1999թ. խնայողությունների և այլ աշխարհից ստացված կապիտալ տրանսֆերտների աճը էական նշանակություն ունի ընթացիկ և հեռանկարային մակրոտնտեսական միջավայրում: Խնայողությունների աճը հիմնականում մասնավոր հատվածի ներքին խնայողությունների ձևավորման հաշվին է: Ուսքացատրվում է թեկուզև այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունում տնտեսության ընդհանուր ծավալում մասնավոր սեկտորի տեսակարար կշիռը կազմում է մոտ 80%: Այս հանգամանքը կարևորում է տնտեսությունում խնայողությունների հաշվին ներդրումների դիվերսիֆիկացիայի խնդիրը:

Եթե համեմատություն կատարելու լինենք հիմնական միջոցների համախառն կուտակման (ծեռք բերված նոր կամ արդեն գոյություն ունեցող հիմնական ֆոնդերի արժեքն է՝ հանած դուրս գրված, վաճառված ֆոնդերի արժեքը) և հիմնական միջոցների սպառման միջև (արտացոլում է հիմնական ֆոնդերի արժեքի նվազում՝ ֆիզիկական, բարոյական մաշվածություն), ապա դժվար չէ նկատել, որ կապիտալի կուտակման հիմնական մասն ընկնում է մաշված հիմնական միջոցների փոխարինմանը (1990-ական թվականների սկզբի տվյալներով մոտ 80%, իսկ վերջի տվյալներով՝ 50-60%), իսկ 1992թ., 1993թթ-ին կապիտալի սպառումը նույնիսկ գերազանցում է դրա կուտակմանը, այսինքն տնտեսությունում տեղի է ունենում զուտ բացասական ներդրում: Սակայն 1994-1995թթ-ներին, երբ տնտեսությունում աճ էր նկատվում, արտադրական հզորությունները սկսում են աճել, թեև ոչ արագ տեմպերով, սակայն այդ աճը վկայում է Հայաստանում ներդրումային գործընթացի աշխուժացման մասին: Ըստ կենտրոնական բանկի տվյալների, 2000թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ իրականացված կապիտալ ներդրումների կազմում 42.3%-ը բաժին է ընկել կապիտալ շինարարությանը՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի 40.1%-ի դիմաց, համապատասխանաբար աճել են արտադրական նշանակության կապիտալ ներդրումները: Միևնույն ժամանակ աճել է ձեռնարկությունների միջոցներից իրականացված կապիտալ ներդրումների տեսակարար կշիռը՝ նախորդ տարվա 12.9%-ից հասնելով 33.4%:

Վերջին մի քանի տարիներին որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել կապիտալ միջոցների ձևավորման աղբյուրներում, ինչի մասին վկայում է պետական միջոցների հաշվին կատարվող կապիտալ ներդրումների բաժնի զգալի կրճատման և արտասահմանյան ներդրումների բաժնի մեծացման փաստը: Կապիտալ ներդրումների ծավալում արտասահմանյան ներդրումների դինամիկան արձանագրում է, որ այդ ներդրումների բաժինը 1994-1996թթ. աճել է մոտ երեք անգամ: Հիմնական միջոցների համախառն կուտակման մեջ դրա բաժինը տատանվել է 16-20%-ի սահմաններում:

Անցումային ժամանակաշրջանում շատ զարգացող երկրներ սկսեցին վերանայել օտարերկրյա կապիտալի հետ կապված կառավարման և ռիսկի միջև համապատասխան հավասարակշռությունը: Մասնավորապես նրանք նորոպի ընկալեցին օտարերկրյա ներդրողների ռիսկը և կառավարման վերահսկումից ստացվող օգուտները: Եթե անգամ ընդունենք քննադատների տեսակետները, թե նվազ բնական տեսուրսների և խնայողությունների դեֆիցիտի պայմաններում բաց տիպի փոքր տնտեսությունը չի կարող տնտեսապես շահել որևէ օտարերկրյա ներդրումից, միևնույն է չենք կարող անտեսել այն փաստը, որ փոքր տնտեսությունը ստիպված է էքստենսիվ առևտուր կատարել և կարիք ունի մրցունակ արտադրության ու արտահանման, իսկ դա նշանակում է, որ կոշտ հովանավորությունը նպատակահարմար չէ: Բաց տնտեսությունը լուրջ սուբսիդիաներ չի տրամադրում տեղական ձեռնարկություններին, որոնք կարող էին դժկամությամբ տրամադրվել օտարերկրացիներին: Բնական ռեսուրսների սակավությունը նշանակում է, որ համարյա չկա բնական ռեսուրսների վարձակալության հնարավորություն, որը տվյալ երկրում կարող էր տրամադրվել արտոնյալ խմբերին: Վերջիվերջո խնայողությունների դեֆիցիտը նշանակում է, որ օտարերկրյա միջոցների ներգրավումն ընդհանրապես անհրաժեշտ է, լինի օտարերկրյա ուղղակի ներդրումների կամ այլ տեսքով:

Պաշտոնական վիճակագրության համաձայն, 1998-1999թթ. ընկած ժամանակահատվածում Հայաստանում գրանցվել են շուրջ 1350 օտարերկրյա ներդրումներ կատարած ձեռնարկություններ, որոնց զգալի մասը գրանցվել են վերջին երեք տարիների ընթացքում:

Եթե խմբավորելու լինեմք ներդրման չափի և ներդրման հեռանկարների վրա ներգործող ազդակները, ապա բացի վերը նշված ցուցանիշներից, դրա վրա կարող է ազդել նաև երկրում 1 շնչի հաշվով արտադրված և օգտագործված ազգային եկամտի մեծության կառուցվածքը, այդ եկամուտների բաշխման կառուցվածքը, արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և այլ առաջատար ճյուղերի զարգացման մակարդակը, արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների վիճակը, մասնավոր ոլորտի զարգացման մակարդակը, դրա չափերը, արդյունավետությունը, երկրի արտաքին և ներքին պարտքի մեծությունը, պետական բյուջեի եկամուտների և ծախսերի հարաբերությունը, տեղական շուկայի տարողությունը, հարկաբյուջետային ու դրամավարկային քաղաքականության արդյունավետ կոորդինացիան, ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված ֆինանսական շուկայի տոկոսադրույքների նվազեցումը, տնտեսական քաղաքականության կարգավորման լծակների արդյունավետության բարձրացումը, երկրի աշխարհաքաղաքական դիրքը, ազգային անվտանգության վիճակը և այլն: